«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

18 նոյեմբերի, 2022 թ. N 26-L

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությունը 8.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022 թ. նոյեմբերի 18-ի N 26 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի

2023 թվականի գործունեության ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի (այսուհետ՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողով) 2023թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ՝ նպատակ ունենալով ապահովել Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթների և նպատակների արդյունավետ և արդյունքահեն իրագործումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից և առկա տեխնիկական և մարդկային ռեսուրսներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Հաշվապահական հաշվառման ոլորտում մասնագիտական փոփոխությունների վերաբերյալ սեմինարի կազմակերպում	ՖՀՄՍ-ների վերջին զարգացումների մասին նյութերի պատրաստում և դրանց հիման վրա սեմինարի անց կացում	հոկտեմբեր 2023
2	Հաշվապահական հաշվառման ոլորտին վերաբերող ՇՄԶ դասընթացների կազմակերպում	Տարբեր ՖՀՄՍ-ների վերաբերյալ ՇՄԶ դասընթացներ	Տարվա ընթացքում
3	Հաշվային պլանի փոփոխման	Հաշվային պլանում փոփոխությունների մասին բաց	Մինչև դեկտեմբեր 2023

	վերաբերյալ առաջարկություններ	քննարկումների կազմակերպում և նախագծի մշակում	

Հաշվապահական հաշվառման

հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ասատրյան